ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 481-Ա

14 օգոստոսի 2026 թ.

ՓԱՌԱՆՁԵՄ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԵՏ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ 21-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 04 ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 16-րդ հոդվածի 1.5-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 24-ի N 852 արձանագրությունը (2026 թվականի օգոստոսի 10-ի Ն/2955-2026)

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքարի Հ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Փառանձեմ Սարգսյանի հետ 2026 թվականի օգոստոսի 14-ից լուծել 2026 թվականի հունվարի 21-ին կնքված N 04 ժամկետային աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան զբաղեցրած պաշտոնից:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքարի Հ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Փառանձեմ Սարգսյանի համար վերջին աշխատանքային օր համարել 2026 թվականի օգոստոսի 14-ը:

14.08.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840509

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ